

ՏԱՐԱԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ ԵՎ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Տարածությունը և ժամանակը մարդկային գոյության հիմնական կարգերն են և աշխարհի պատկերման հիմքը: Սրանով է պայմանավորված այն իրողությունը, որ տարածությանը և ժամանակին վերաբերող խնդիրները և այն, թե դրանք ինչ ձևով են արտացոլվում մարդու գիտակցության մեջ, բոլոր ժամանակներում մեծ հետաքրքրություն են ներկայացրել գիտության ամենատարբեր ոլորտների՝ փիլիսոփայության, ճշգրիտ գիտությունների, հոգեբանության, լեզվաբանության համար:

Այն շրջապատող աշխարհի բոլոր բաղկացուցիչներն ընկալվում են որոշակի տարածության մեջ, և այս փաստն իր արտացոլումն է գտնում լեզվում: Ռ. Ջեկենդոֆֆը, գիտարկելով “ներքին խոսքի” տեսությունը (“այն գիտելիքների, որոնք կան լեզվակրի ուղեղում և գիտակցության մեջ”), նշում է, որ այս ոլորտի ուսումնասիրություններն առաջին հերթին պարունակում են տարածության մեջ գտնվելու կամ տեղաշարժվելու խնդրի տարաբնույթ մեկնաբանումներ (Jackendoff 1995:552): Նման հետաքրքրությունն, ըստ հեղինակի, պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից կարևորագույնները հետևյալներն են. ա) տարածականության նկարագրության դաշտը բավականին ծավալուն է, բ) տարածության մեջ օբյեկտի զբաղեցրած դիրքի և նրա տեղաշարժման վերաբերյալ ասույթները հիմնավորվում են տեսողական զգայարանների միջոցով և նրանց համապատասխանող լեզվական միջոցները բավականին քարոք բնույթ են կրում:

Մարդու համար տարածության և տարածական հարաբերությունների կարևորությունը, այդ հարաբերությունների ազդեցությունը մարդկային մտածողության, գիտակցության և լեզվի վրա առաջ են բերում մի շարք խնդիրներ, որոնք է. Ձևատև ձևակերպում է հետևյալ կերպ. ա) տարածական բառապաշարի սահմանների տարրորոշում, բ) տարածական և ոչ-տարածական իմաստներ արտահայտող բազմիմաստ բառերում այդ իմաստների տարանջատում (Zlatev 1997: 68):

Ցանկացած լեզվում գոյություն ունեն միջոցներ, որոնք գործածվում են տարածականության իմաստ արտահայտելու համար: Սակայն “տարածականության լեզու” ասելով՝ հետազոտողները նկատի ունեն այն լեզվական միավորները, որոնք ի սկզբանե գործածվում են օբյեկտների գտնվելու տեղը կամ

դիրքը նկարագրելու համար, և հետևաբար՝ տարածականություն արտահայտող տիպական միջոցները պետք է պատասխանեն՝Որտեղ՝ հարցին(Miller, Landau, Zlatev): Սսվածից հետևում է, որ to fall in love, to walk on air, from hand to mouth տիպի արտահայտությունները տարածականության իմաստից զուրկ են, քանի որ նրանցում բուն տարածականություն արտահայտող լեզվական միավորները կորցնում են իրենց առաջնային իմաստը, ձեռք բերելով որոշակի փոխաբերական իմաստ: Սակայն այդ փոխաբերական իմաստը ձեռք է բերվում հենց տարածականության իմաստ արտահայտող լեզվական միջոցներով, նրանց կարգայնացման և հասկացութացման հետևանքով: Վերջիններս մարդու ճանաչողական գործունեության հիմնական հասկացություններն են: Հասկացութացման գործընթացն ուղղված է մարդկային փորձի նվազագույն բովանդակային միավորների առանձնացմանը և նրանց վերածմանն առավել ընդհանուր խմբերի՝ դասերի (Кудрякова и др. 1996: 93): Դա ստացվող տեղեկատվության գիտակցումն է, որը հանգեցնում է հասկացությունների՝ մարդու գիտակցության մեջ ամրագրված իմաստների ստեղծմանը:

Միևնույն ժամանակ՝ աշխարհի մասին մեր ունեցած գիտելիքները պահպանվում են ընդհանրացված, կարգային ձևով: Կարգայնացման գործընթացն արտաքին աշխարհի բաժանումն է առանձին դասերի և կոնկրետ օբյեկտների վերագրումն այդ դասերին:

Տարածականության հասկացութացումն ու կարգայնացումը հետազոտական առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում և դարձել են բազմաթիվ լեզվաբանական ուսումնասիրությունների առարկա, սակայն այս հոդվածում նպատակ չենք ունեցել տարածականության խնդիրն ուսումնասիրելու ճանաչողական լեզվաբանության դիտանկյունից: Մեր հոդվածի նպատակն է բնության առնել անգլերենի որոշ բայերի և գոյականների իմաստաբանական առանձնահատկությունները և պարզել այն մեխանիզմները, որոնցով ապահովվում է նրանց տարածական իմաստը:

Տարածականության իմաստն արտահայտվում է լեզվական բոլոր մակարդակների միավորներով՝ բառային, ձևաբանական, շարահյուսական: Անդրադառնալով լեզվի բառային մակարդակին, պետք է նշել, որ տարածականության իմաստ կարող են արտահայտել գրեթե բոլոր խոսքի մասերին պատկանող բառային միավորները: Սակայն հետազոտողների զգալի մասը դրանց շարքում առանձնացնում են հատկապես նախդիրները և ցուցական դերանունները, քանի որ դրանք առավել հաճախ են գործածվում տարածական հարաբերություններ արտահայտելու համար(Միլլեր, Յերսկովից և այլոք):

Լեզվաբանների մեկ այլ խումբ հարում է այն կարծիքին, որ տարածական հարաբերությունների արտահայտման կարևորագույն միջոցը բայն է

(Իբրագիմովա, Կրավչենկո, Ռախիլինա): “Բայը տեղայնության իմաստային դաշտի կենտրոնն է”, գրում է Ս. Իբրագիմովան, հավելելով, որ այն “ապահովում է կապը տեղային իմաստ արտահայտող այլ միավորների հետ, դրանով իսկ օբյեկտիվ իրադրություններ ստեղծելով լեզվի գործառնության ողջ գործընթացում” (Ибрагимова 1992: 46):

Խնդրո առարկային վերաբերող հետազոտություններից շատերում տարածական բայերի շարքին առաջին հերթին վերագրվում են stand, sit, lie բայերը, որոնք արտահայտում են օբյեկտի երեք հիմնական դիրքերը (Իբրագիմովա, Կրավչենկո, Սմետանինա և այլոք): Նման ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված բայերն առավել, քան ուրիշները, համակցվում են զանազան շնչավոր և անշունչ օբյեկտներ նշող գոյականների հետ, արտահայտելով նրանց տեղայնացման իմաստ:

Այս մոտեցումն ընդունելի է, սակայն, կարծում ենք, մասամբ: Տարածական բայերի ցանկը կարող է ընդլայնվել, եթե տարածականությունը դիտարկենք ավելի լայն ընդգրկմամբ: Այսպես, եթե stand, sit, lie բայերն արտահայտում են օբյեկտի դիրքը տարածության մեջ, ապա fall, rise բայերն արտահայտում են օբյեկտի տեղափոխում մի դիրքից (տարածությունից) մեկ այլ դիրքի, իսկ swim, skate, fly, glide բայերն արտահայտում են օբյեկտի շարժումն այս կամ այն կոնկրետ տարածության մեջ՝ ջրում, օդում և այլն: Նման դիտարկումը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ տարածական բայերի մի խումբ տարածականության իմաստ արտահայտում է բառային համակցելիության արդյունքում և կան բայեր, որոնց՝ տարածականություն արտահայտելու “ներուժը” բուն բառիմաստի մեջ է, այսինքն՝ նրանց իմաստաբանական կառուցվածքում: Տարածականության հասկացութացման մեկ այլ կարևոր լեզվական միջոց է գոյականը, որի՝ տարածականության իմաստ արտահայտելու վերաբերյալ կարելի է գտնել տարաբնույթ կարծիքներ և մոտեցումներ: Այսպես՝ Վ. Լ. Իբրագիմովան տարածական գոյականները դասակարգում է հետևյալ կերպ. ա) տարածության ընդհանրացված իմաստ արտահայտող գոյականներ, ինչպես՝ place, space, direction, բ) կոնկրետ տարածական իմաստ արտահայտող գոյականներ, որոնք հեղինակը ներկայացնում է մի շարք իմաստային ենթախմբերում. աստղագիտությանը վերաբերող բառեր (earth, universe), տեղանք նշող բառեր (field, forest), բնակավայրերի անվանումներ (city, village), ճանապարհ նշող բառեր (road, path), բնակության կամ որևէ գործունեության համար նախատեսված տարածքներ նշող բառեր (house, school), որևէ գործունեության համար նախատեսված առարկաներ նշող բառեր (table, armchair), տարաների և փոխադրամիջոցների անվանումներ (box, train) (Ибрагимова 1986: 18-26):

Ըստ արժանվույն զնահատելով տարածական գոյականների՝ նման մանրակրկիտ դասակարգման առավելությունները, նշենք սակայն, որ այստեղ չեն արտացոլվում տարածականության երեք մակարդակները: Ըստ Օ. Պ. Երմակովայի պնդման, անհատը նախ սովորում է կողմնորոշվել իրեն շրջապատող իրական տարածության մեջ. այնուհետև անցնում ավելի բարձր աստիճանի՝ փոխաբերական, հոգևոր տարածության ճանաչմանը (Ермакова 2000: 289-290): Նշվածից ելնելով, տարածական հարաբերությունների ուսումնասիրության շրջանակներում հեղինակն անհրաժեշտ է համարում առանձնացնել տարածականության երեք հիմնական մակարդակներ:

ա) ֆիզիկական տարածություն, այսինքն՝ մարդուն շրջապատող աշխարհը

բ) անհատին շրջապատող հասարակական-մշակութային աշխարհը

գ) անհատի ներքին՝ հոգեկան աշխարհը (Ермакова 2000: 290-292):

Վերը բերված երկու դասակարգումներից կարելի է եզրակացնել, որ տարածականության գաղափարը լեզվաբանության մեջ ընկալվում և մեկնաբանվում է նեղ և լայն իմաստներով: Նեղ իմաստով՝ «տարածականություն» ասելով պետք է հասկանալ անհատին շրջապատող ֆիզիկական աշխարհը, իսկ լայն առումով՝ նաև տարածականության «փոխաբերականացումը»: Տարածական գոյականների փոխաբերական իմաստներից են, օրինակ, մարդու զանազան հոգեվիճակների արտահայտումը (depression, euphoria), հասարակական և քաղաքական հասկացությունների նշումը (niche, summit) և այլն:

Սակայն տարաշականության փոխաբերականությունը, կարշում ենք, միասեռ հասկացություն չէ: Գոյականների մի խումբ արտահայտում է փոխաբերական տարածության իմաստ, ինչպես օրինակ՝ մարդու զանազան հոգեվիճակներ, հասարակական խմբեր և այլն (depression, class, staff): Մինչդեռ գոյականների մեկ այլ խմբի հատուկ են տարածականության և ուղիղ, և փոխաբերական իմաստները:

Չմմ. niche – 1. shallow recess in wall to contain statue, vase, etc.

2. place destined or suitable for person's occupation

lobby – 1. porch, ante-room, entrance-hall, corridor

2. body of those who lobby, solicit support (of influential person)

Ինչպես երևում է բերված օրինակներում, բառերից յուրաքանչյուրի առաջին իմաստն արտահայտում է կոնկրետ ֆիզիկական տարածություն, իսկ երկրորդը՝ փոխաբերական տարածություն:

Ամփոփելով մեր հետազոտության արդյունքները, նշենք, որ բայը և գոյականը տարածականություն և տարածական հարաբերություններ արտահայտելու կարևոր բառային միջոցներ են: Ըստ որում՝ եթե բայի միջոցով

տարածականությունն արտահայտվում է միջնորդավորված ձևով (այսինքն՝ բայն արտահայտում է ոչ թե բուն տարածականություն, այլ՝ օբյեկտի դիրքը տարածության մեջ), ապա գոյականն այդ իմաստն արտահայտում է ուղղակիորեն: Սակայն եթե տարածականությունը մեկնաբանենք (այն իմաստով, ապա պետք է ընդունենք, որ մի խումբ գոյականների հատուկ է ֆիզիկական տարածության իմաստը, և այդ գոյականների թիվն ամենից մեծն է ցանկացած լեզվում, մինչդեռ գոյականների մեկ այլ խումբ արտահայտում է փոխաբերական տարածության իմաստ, իսկ որոշ գոյականների՝ տարածության փոխաբերական իմաստ:

Գրականություն

1. Ермакова О. П. Пространственные метафоры в русском языке.// Логический анализ языка. Язык и пространство. – М., 2000
2. Ибрагимов В.Л. Отражение в языке категории пространства.// Исследования по семантике: семантика слова и фразеологизма. – Уфа, 1986
3. Кравченко А.В. Когнитивные структуры пространства и времени в естественном языке.// Известия РАН. Серия литературы и языка - 1996, Т. 55, N3
4. Кубрякова Е.С. Язык пространства и пространство языка.// Известия РАН. Серия литературы и языка.- 1997, Т.56, N3
5. Рахилина Е.В. Когнитивный анализ предметных имен: семантика и сочетаемость. М. 2000
6. Сметанина Т.В. Человек как точка отсчета пространственной системы координат.// Лингвистические парадигмы и лингводидактика: материалы XI межд. научно-практической конференции. Иркутск, 2006
7. Herskovits A. Language and Spatial Cognition. Cambridge University Press, 1986
8. Jackendoff R. Semantics and Cognition.// The Handbook of Contemporary Semantic Theory. Blackwell Publishers, 1997
9. Miller G.A. Language and Perception. Cambridge University Press, 1976
10. Zlatev J. Situated Embodiment. Stockholm: Gotab, 1997

Spatial Verbs and Nouns in English.

The article touches upon the lingual means of expressing space and spatial relations in English, namely the spatial verbs and nouns. Alongside with the verbs *stand*, *sit* and *lie*, which are considered to be the most commonly used spatial verbs as they express the position of the objects in space, the author singles out some verbs which express space independently from their combinability, concluding that there are verbs the semantic structure of which involves the meaning of the space in which the action goes on (*float*, *skate*, *glide*, etc.).

Analyzing the spatial nouns, the author singles out their three main groups: nouns which denote physical space (general or concrete), those expressing metaphorical space (social and cultural space, various states of mind and emotions) and nouns which, due to their polysemantic nature, can express physical space as well as various metaphorical spatial meanings.